

## ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՋՈՂՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Մեկուկես տասնամյակից ավելի է, որ հրապարակվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Լեզու և լեզվաբանություն» գիտական հանդեսը: Լեզվաբանների և մայրենի լեզվի խնդիրներով զբաղվողների համար այն շատ սպասված պարբերական է, միաժամանակ նաև ամբիոն՝ արտահայտելու իրենց մտորումները լեզվաբանական բարդ խնդիրների լուծումների և արդի լեզվաքաղաքականության վերաբերյալ:

Հանդեսն ունի միջազգային խմբագրական խորհուրդ, հմուտ գլխավոր խմբագիր, ահա թե ինչու պարզաճ մակարդակով նրանում լուսաբանվում են հայոց լեզվի, ինչպես նաև ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամենաարդիական հիմնախնդիրները:

Շահեկան է, որ պարբերականն իր էջերում գրաքննական հոդվածներով անդրադառնում է նոր հրապարակվող լեզվաբանական աշխատություններին, լուսաբանում ոլորտի գիտական կյանքը:

Ջերմորեն շնորհավորում եմ հանդեսի խմբագրակազմին, գլխավոր խմբագիր պրոֆ. Վ. Համբարձումյանին՝ հրեպյանի առթիվ և մաղթում հետագա հաջողություններ Ձեր ազգանվեր և շնորհակալ աշխատանքում:

**Յու. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ**  
**ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,**  
**ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական**  
**գիտությունների**  
**բաժանմունքի ակադեմիկոս - քարտուղար**